

2017

Համայնքների Բնակիչների
Ներգրավվածությունը Գյուղատնտեսական
Որոշումների Կայացման Գործում



Նախաբան

Համայնքային իշխանության կառուցվածքը իրենից ներկայացնում է կապերի և հարաբերությունների մի բարդ ցանց՝ իշխանության և համայնքներում իրենց դերերը կատարողների միջև: Այս իշխանությունները, այլ կերպ ասած՝ առաջնորդները, ուղորդում են հասարակության գործունեությունը դեպի սահմանված նպատակներին հասնելուն: Առաջնորդության հասկացությունը շատ կարևոր է ցանկացած հասարակության գոյատևման համար: Նույնիսկ այնտեղ, որտեղ կան սահմանված նորմեր, առաջնորդներ նույնպես հարկավոր են, որպեսզի ապահովեն այդ նորմերի ճիշտ իրականացումը հասարակության առողջ ապրելակերպի համար: Տեղային ղեկավարությունը պետք է նաև հանդես գա որպես ընթացիկ գործոն զարգացման ծրագրերի իրականացման հարցում: Սովորաբար զարգացման ծրագրերի հաջողակ ղեկավարման հիմնական տարրերը պետք է հաստատվեն, որպեսզի մասնակից դառնան իրականացման հարցերում: Գյուղական համայնքներում հաճախ հանդիպող ամենամեծ խնդիրը այն է, որ ղեկավարները չեն զիջում որոշումներ կայացնելու դիրքերը այլ անձերի, հատկապես տարբեր զարգացման ծրագրերի շրջանակներում: Շատերը համոզված են, որ կարող են արդյունավետ աշխատանք կատարել և որոշումներ կայացնել տարբեր հարցերի շուրջ, այդպիսով ստանձնելով նախաձեռնողի և կատարողների դերեր: Շատ կարևոր է իմանալ համայնքի հզոր կառուցվածքը, իմանալ որքանով է այն <<փակ>> կամ <<բաց>>, և հասկանալ, որքանով են կայացրած որոշումները դրական ազդում համայնքների զարգացման համար:

Համայնքների բնակիչները, ֆերմերները կազմում են յուրաքանչյուր զարգացող երկրի բնակչության հիմնական մասը: Զարգացող երկրների կառավարությունները կրում են մեծ պատասխանատվություն իրենց գյուղական համայնքների ադեկվատ զարգացման հարցում: Տեղային կառավարման մարմինները համակարգում են համայնքների ոչ միայն գյուղատնտեսական և անասնապահական աշխատանքները, այլ նաև խթանում են տեղի բնական ռեսուրսների հաստատուն պահպանումն ու օգտագործումը: Եթե ֆերմերները չունեն համապատասխան տեղեկատվություն և իմացություն նորարարական տեխնոլոգիաների մասին, ինչը կարող է օգնել վերջիններիս հասնել առավելագույն գյուղատնտեսական եկամտաբերության, նրանք

դառնում են մի խումբ, որը բնակվում է <<մթության մեջ>>, և գոյատևման միջոցներ որոնելու համար տեղափոխվում են դեպի քաղաքային տարածքներ:

Ամենաեծան ներդրումը գյուղատնտեսության զարգացման բարելավման համար տեղեկատվության համարժեք հասանելիությունն է՝ վաղ նախազգուշացման համակարգեր (երաշտ, վնասատուներ, հիվանդություններ և այլն), բարելավված սածիլներ, պարարտանյութեր, վարկեր, շուկայական գներ: Ավանդական տպագրական ուղեցույցներում և գրադարաններում եղել են տեղեկատվական բացթողումներ և սխալներ: Տեղեկատվության մատուցման լավագույն մեթոդներն են հեռուստատեսությունը, համապատասխան ֆիլմերը, նկարները, բանահյուսությունը, խմբային քննարկումները, հանդիպումներն ու ցուցահանդեսները:

Ուսումնասիրությունների նպատակները


Ուսումնասիրությունները հատուկ նպատակ են հետապնդում՝

- Բացահայտել համայնքների առաջնորդ մարմիններին
- Հասկանալ տվյալ առաջնորդների անձնային հատկանիշները
- Հասկանալ այդ առաջնորդների դերերը, ազդեցությունն ու ներդրումները որոշումների կայացման տարբեր ասպեկտներում
- Հաստատել այդ առաջնորդների ներգրավվածությունը տարբեր զարգացման ծրագրերում:

Ո՞րն է «Առողջ համայնք» հասկացությունը

Առողջ համայնքը հենվում է տնտեսական, սոցիալական, մարդկային և շրջակա միջավայրի գործոնների հավասարակշռվածության վրա, խթանելու համար համայնքում բնակվող ժողովրդի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական բարեկեցությունը:

- Մարդկային բաղադրիչը մեզ տալիս է «մեր կյանքի իմաստը»
- Հաստատուն տնտեսական հիմքը հնարավորություն է տալիս վաստակել արդար ապրուստ



- Սոցիալական հիմքը հնարավորություն է ընձեռնում աճի և փոխազդեցության
- Համայնքային բարեկեցությունն ու հաստատուն և մաքուր շրջակա միջավայրը գտնվում են հավասարակշռվածության մեջ:

Արհրաժեշտ են հետևյալ գործոնները <<առողջ համայնքի>> հաստատման և պահպանման համար՝

- Համայնքի ոգին
- Համայնքի տեսլականը զարգացման կառավարման համար
- Համայնքում ներդրումներ անելու պատրաստակամությունը
- Համայնքի տնտեսական համակարգը՝ համաշխարհային փոփոխվող տնտեսության ներքո
- Առաջնորդները, որոնք կարող են ստեղծել գործընկերություն
- Առաջնորդները, որոնք կարող են փնտրել տեղեկատվություն և կայացնել որոշումներ
- Ծրագրերի երկարաժամկետ պլանավորումն ու իրականացումը
- Հաստատուն կոմունիկացիոն ցանցը
- Համայնքի ինքնատիպության հաստատումը
- Նորարարությունների հանդեպ պատրաստակամությունը
- Համայնքի ակտիվ ֆերմերների կորիզի հաստատումը
- Մարդկային և ֆինանսական ռեսուրսների կազմակերպումն ու առավելագույնի հասցնելու խնդիրները:

Համայնքի փոփոխությունը

Բոլոր համայնքները պետք է պատրաստ լինեն փոփոխությունների: Համայնքների առաջնորդները պետք է լինեն ներգրավված այդ փոփոխությունների հաղթահարման հարցերում: Համայնքների ղեկավարներն ու բնակիչներն ունեն ընտրություն՝ պլանավորել փոփոխությունները և քաղել առավելագույնս այդ փոփոխություններից, կամ թողնել որպեսզի վերջիններս կատարվեն ինքն իրեն:

<<Մեր բարոյական պարտքն է ոչ թե կանգնեցնել ապագան, այլ ձևավորել այն...ուղղել մեր ճակատագիրը դեպի մարդկային գործունք և մեղմացնել անցումային փուլերի հետևանքները>>- Էլվին Տոֆլեր

Համայնքի ներգրավվածությունը

Համայնքների ներգրավվածությունը որոշումների կայացման հարցում ունի որոշակի համոզմունքներ և արժեքներ՝

- Յուրաքանչյուր համայնք ունի իր ուժեղ կողմերը, խնդիրներն ու մտահոգությունները
- Յուրաքանչյուր համայնքի բնակիչ հնարավորություն ունի լուծել իր առջև ծառացած խնդիրները և հասնել իր նպատակներին
- Ոչինչ տեղի չի ունենում վակուում՝ որոշումների կայացումը պետք է կատարվի այն տարածքում, որտեղ առաջացել է խնդիրը
- Այդ խնդիրների լուծման յուրաքանչյուր քայլի իրականացման մեջ պետք է ներգրավված լինեն տվյալ համայնքի բնակիչները
- Համայնքները պետք է հաստատեն իրենց սեփական կարիքները, սահմանել առաջնահերթությունը, պլանավորել ապագան և պատասխանատվություն կրել իրենց կայացրած որոշումների համար

<<Առաջխաղացումը անհնար է առանց փոփոխության, և նրանք, ովքեր պատրաստ չեն փոխել իրենց մտածելակերպը, անկարող են փոխել որևէ բան>>- Ջորջ Բերնարդ Շոու

Փոփոխությունների նախաձեռնողները

Վերջիններս համայնքների այն բնակիչներն են, որոնք գիտակցում են փոփոխությունների կարևորությունը և կատարում են նախաձեռնություններ: Նրանք մոտիվացնում են և ստեղծում պատրաստակամություն համայնքի բնակիչների մոտ, փոփոխությունների ընդունման և իրականացման համար:


Արդյունավետ որոշումների կայացումը

Համայնքներում որոշումների կայացումը ներառում է հետևյալը՝

1. Իրավիճակի ուսումնասիրություն
2. Նպատակների կառուցում
3. Բանալի՝ խնդիրների հաստատում
4. Առաջնահերթությունների հաստատում
5. Հարցերի լուծման այլընտրանքային մեթոդների պարզաբանում և քննարկում
6. Գործողությունների իրականացման ընթացքի կառուցում
7. Գործողությունների ծրագրի զարգացում
8. Այդ ծրագրի իրականացում
9. Արդյունքների գնահատում

Այն հիմնական հարցերը, որոնք
օգտագործվում են որպես
ստուգաթերթիկ, այս գործընթացում՝

- Արդյո՞ք բոլոր հարկավոր անձիք
ներգրավված են գործընթացում
- Արդյո՞ք բոլորն են համաձայն իրավիճակի սահմանման հարցում
- Արդյո՞ք բոլորն են հասկացել, թե ինչպես կայացվեց որոշումը



- Արդյո՞ք բոլորն են մասնակցել որոշման կայացմանն ու բավարարված են վերջինից
- Արդյո՞ք կայացրած որոշումը իրատեսական է և հասանելի

Համայնքների կարիքները

Որոշման կայացումից հետո պետք է անցում կատարել հաջորդ քայլին՝

- Ի՞նչ է հարկավոր
- Որքա՞ն շատ են կարիքները
- Որո՞նք են դրանք
- Որքանո՞վ է կարևոր այդ կարիքների բավարարումը
- Ի՞նչ է արվել մինչ այս
- Ի՞նչ այլ որոշումներ, լրացուցիչ գաղափարներ կարող են իրականացվել
- Ո՞վ է հետաքրքրված այս որոշման մեջ քայլեր իրականացնելու հարցում

Այն տեղեկատվությունը, որը հավաքագրվում է, կարող է լինել 2 ձևի՝ քանակական (փաստեր, թվեր, գործիչներ), և որակական (մարդկանց կարծիքներն ու հայտարարությունները): Այս տեղեկատվություններից յուրաքանչյուրն օգնում է գործողությունների իրականացման հարցում:

Գործողության նախաձեռնման մեթոդները

Ինչպե՞ս հավաքագրել տեղեկատվությունը, ինչի հիման վրա կիրականացվի լավագույն որոշում:

Գոյություն ունեն հետևյալ մեթոդները՝

- Բնակչության վիճակագրության ուսումնասիրություն
- Համայնքային ռեսուրսների և ծառայությունների ուսումնասիրություն
- Համայնքային ղեկավարության ուսումնասիրություն
- Ֆոկուս խմբեր
- Հանրային ժողովներ

- Բրեխնաստորմինգ
- Անվանական խմբեր



Վիճակագրություն

Վիճակագրական տվյալների մի ամբողջ տեղեկատվություն, կապված համայնքի ժողովրդագրությանն ու տնտեսությանը, հասանելի է քաղաքային, համայնքային կառավարությունների միջոցով: Այդ տվյալներից կարելի է առանձնացնել այն տեղեկությունները, որոնք հարկավոր են տվյալ պահին: Սա համայնքի ընդհանուր տեսքն է և ոչ միշտ է հարմար հիմնվել վերջիններիս վրա որոշումների կայացման համար:

Համայնքի հետազոտություն


Համայնքների հետազոտությունների համար օգտագործվում է հասարակ հարցաթերթիկ, որը բաժանվում է համայնքի բնակչությանը: Վերջինս կարելի է ուղղարկել հեռախոսի և էլեկտրոնային հասցեի միջոցով, կամ լրացնել դեմ առ դեմ: Պետք է հաստատել թիրախային խմբերին՝ այն մարդկանց, որոնք հատկապես մեծ կարևորություն ունեն այս հարցում: Գրեթե անհնար է կայացնել որոշում, որը կբավարարի ողջ համայնքի կարիքները: Պետք է առանձնացնել տեղեկատվությունը ըստ տարիքային խմբերի, սեռի և այլն:

Համայնքների ղեկավարների հարցազրույց

Իրավիճակի հիմնական իրազեկողները համայնքների ղեկավարներն են՝ այն մարդիկ, ովքեր լավագույնս են տեսնում համայնքների խնդիրներն ու դրանց լուծման ճանապարհները: Վերջիններիս տրվում են նույն հարցաթերթիկները:



Ֆոկուս խմբեր



Սա սովորական խմբակային հարցազրույց է: Հարցազրույցն անցկացնողը հանդիպում է 6-12 հոգանոց խմբի հետ, ում փորձը ուղղակիորեն ուղղված է որոշումների կայացմանը: Տրվում են հարցեր, և մասնակից անդամները հնարավորություն են ունենում հայտնել իրենց կարծիքները: Արդյունքում ուսումնասիրվում են բոլոր բարձրացված հարցերի տարատեսակ պատասխանները:

Հանրային ժողովներ

Սա մի շարք մարդկանց հետ քննարկում է: Հանրային ժողովները կամ ֆորումները թույլ են տալիս իրականացնել երկկողմանի քննարկումներ, հիմնական որոշում կայացնողների և համայնքի այլ անդամների միջև: Սա հիմնավոր տարբերակ է հասկանալու համար համայնքի մեծամասնության կարիքներն ու կարծիքները:

Բրեխնսթորմինգ

Այստեղ ստեղծագործական մտածողությունը գերազանցում է գործնականին: Միտքը այն է, որ ուսումնասիրվեն բոլոր հնարավոր մտահաղացումները, որքան էլ վերջիններս ոչ պրակտիկ թվան: Սա տալիս է մի շարք նոր և թարմ մտահաղացումներ քննարկումները սկսելուց առաջ: Սա նաև հնարավորություն է տալիս մարդկանց մտածել սահմաններից դուրս:

Անվանական խմբեր

Անվանական խմբերը մի քանի անդամներից բաղկացած հանդիպումներ են, որոնք կրում են ձևական բնույթ և որի ընթացքում՝

1. Յուրաքանչյուր անդամ ներկայացնում է իր կարծիքը տվյալ խնդրի վերաբերյալ և վերջինիս լուծման տարբերակները գրավոր կերպով, առանց մնացած անդամների հետ քննարկման
2. Ժամկետի ավարտից հետո (10-15 րոպե), յուրաքանչյուր անդամ կարդում է իր նշումները՝ խիստ կանոնակարգված կերպով: Յուրաքանչյուր պտույտի ժամանակ անդամները կարող են ներկայացնել միայն 1 մտահաղացում
3. Յուրաքանչյուր մտահաղացման ներկայացման ժամանակ միտքը գրվում է հատուկ աղույսակի մեջ, և դա շարունակվում է այնքան ժամանակ, մինչև բոլոր մտահաղացումները անխտիր կլրացվեն աղույսակում
4. Այնուհետ, ընդհանուր քննարկում է անցկացվում բոլոր մտահաղացումների վերաբերյալ, առաջնորդվելով տվյալ մտահաղացման հեղինակի ղեկավարությամբ
5. Այնուհետ խումբը քվեարկություն է անցկացնում: Ձայների մեծամասնությունը հավաքող մտահաղացմանը տրվում է ընթացք:

Վերջաբան

Այս ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համայնքների ղեկավարումը կոլեկտիվ աշխատանք է, որտեղ որոշումների կայացման համար անհրաժեշտ է հաշվի առնել համայնքի բոլոր անդամների կարծիքներն ու առաջարկները՝ ելնելով վերջիններիս փորձից: Հաշվի առնելով այս ամենը, ճիշտ կայացված որոշումները ուղղորդում են համայնքներին դեպի դրական փոփոխություններ: Այնուհետ իրականացվում են բազում համայնքային զարգացման ծրագրեր, որի ընթացքում բարելավվում են համայնքի ժողովրդի բարեկեցությունն ու սոցիալ տնտեսական վիճակը:



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):